ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «13» նոյեմբեր 2023 թ. N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1550-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 2112-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1596-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 185-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 1395-Ա, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 1286-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1.Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի ««ԷՖ-ԴԻ-ԷՅ լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ)

տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի N 60-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1550-Ա հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետից հետո լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-22 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «ԷՖ-ԴԻ-ԷՅ լաբորատորիա» ՍՊԸ և «ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված N PI003744 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N PI003744 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ) 1 օր հետո Էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն) տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

2. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 2112-Ա հրամանով հաստատված հավելվածի 10-րդ կետից հետո լրացնել նոր 11-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 2-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-06 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N GL/404884 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի նոյեմբերի 22-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

3. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի ««Ս.Ա.Վ.Կ.» ՍՊԸ Սևան» արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1596-Ա հրամանով հաստատված հավելվածի 14-րդ կետից հետո լրացնել նոր 15-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 3-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-33 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Սևան» արտադրանքի սերտիֆիկացման մարմնի և «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N ԸՊ 002202 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի սեպտեմբերի 14-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

4. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 11-ի ««Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ-ի փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 185-Ա հրամանով հաստատված հավելվածի 15-րդ կետից հետո լրացնել նոր 16-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«16. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 4-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-01 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ և «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N ԸՊ 002249 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի հունվարի 15-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 15-ի ««Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ Շիրակի մարզային կենտրոն փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1395-Ա հրամանով հաստատված հավելվածի 15-րդ կետից հետո լրացնել նոր 16-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«16. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 5-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-36 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Ստանդարտ Դիալոգ» ՍՊԸ Շիրակի մարզային կենտրոն փորձարկման լաբորատորիայի և «Նաիրի ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N ԸՊ 002250 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2024 թվականի հունվարի 15-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 23-ի ««Ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1286-Ա հրամանով հաստատված հավելվածի 13-րդ կետից հետո լրացնել նոր 14-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշմամբ հաստատված «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ԵԱՏՄ ՏԿ 051/2021)»:

1) Հիմք ընդունելով սույն հրամանի 6-րդ կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-07 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական:

2) «Ակադեմիկոս Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ և «ՌԳՍ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (N LI002941 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2023 թվականի հոկտեմբերի 1-ը ներառյալ) 1 օր հետո Նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

7. Սույն հրամանի 1-6-րդ կետերով նախատեսված լրացումը գրանցել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

8. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124